ՀԱՅԱՍՏԱՆՆ ԱՅԺՄ ԱՎԵԼԻ ՀԶՈՐ Է

Այս օրերին համայն հայության մտահոգության հիմնական առարկան Հայաստանն է. նրա իրավիճակի, ապագայի և ճակատագրի հարցերը: Եվ թեև կենսականորեն հույժ անհրաժեշտ այդ հարցերին միանշանակ գնահատական չի տրվում, այնուամենայնիվ, այն տպավորությունն է ստացվում, որ տիրապետող են հոռետեսական տրամադրությունները. իրադրությանը դրամատիկական երանգներ հաղորդելու և ապագան մոայլ գույներով ներկայացնելու միտումները: Համենայն դեպս այդ տպավորությունն է ստացվում մամուլում հրապարակված բազմաթիվ հոդվածներից և ռադիոյով ու հեռուստատեսությամբ տրվող հաղորդումներից, որոնցում տիրապետող են սրտաճմլիկ բառերն ու արտահայտությունները (օրհասական վիճակ, անելանելի դրություն, ծնկի գալ և այլն), հայերի պատմական ճակատագրի նկատմամբ ողբասացություններ, հայի ճակատագրի ողբերգականության շղարշ ընդհատելու անհնարինությունը: Եվ բող ներվի մեզ ասելու, կարծեմ թե մի յուրահատուկ մրցակցություն է գնում, թե ո՞վ է՛լ ավելի հոգեցունց բառ կօգտագործի և արցունքաթաց ձևակերպում կգնի շրջանառության մեջ: Եվ այս բոլորն, իհարկե, արվում է ազգը սիրելու մղումով և այդպես վարվողների անկեղծությունը բնավ կասկածի տակ չրպետք է դնել: Դա մտածելակերպ է, որ ձևավորվել է տասնամյակներ, եթե ոչ հարյուրամյակներ շարունակ, և որից հրաժարվելն այնքան էլ դյուրին չէ: Բայց, այդուհանդերձ, դա պետք է արվի և հիմա պատմականորեն դրա ամենահարմար ժամանակն է:

Ամբողջ հարցն այն է, թե ինչպիսի մտածելակերպով և չափանիշներով մոտենալ Հայաստանում ստեղծված դրության գնահատմանը: Եթե դա մենք անենք ավանդական մոտեցումների հիմքի վրա և հին մտածելակերպի շրջանակներում, ապա, իրոք, կացությունը կարող է շատ ծանր, անգամ անելանելի թվալ: Եվ, իրոք, երկրաշարժ՝ ավերածություններով և մարդկային զոհերով, փախուստական-գաղթականներ, շրջափակում, Արցախի հարցի լուծման ձգձգում և այլն, և այլն: Արտաքուստ սա մի այնպիսի ծանր բեռ է, որի տակ կարող է կքել ուզածդ հանրապետությունը: Սակայն եթե մենք մշակենք արժեհամների գրնահատման նոր չափանիշներ, նոր հաղորդական մտածելակերպ և դրանից ելնելով գնահատենք վերջին մեկուկես տարում արցախյան ազատագրական շարժման ազդեցության տակ Հայաստանում և նրա շուրջը ստեղծված իրադրությունը, ապա պատկերը բոլորովին այլ կլինի: Մենք կտեսնենք, որ ոչ միայն վհատվելու, առավել ևս խուճապի մատնվելու որևէ հիմք չկա, այլ, ընդհակառակը, հպարտանալու շատ բան ունենք: Դեռ ավելին, ես կարող եմ պնդել, որ խորհրդային կարգերի գոյության յոթանասուն տարիների ընթացքում Հայաստանը երբեք այնպես հզոր չի եղել, ինչպես այժմ:

Կարող են գտնվել մարդիկ, որոնք տարակուսանքով հարցնեն, թե այդ ինչպե՞ս, ի՞նչ հիմք կա նման եզրահանգումների համար:

Պատասխանենք:

Որևէ ազգի հզորությունը որոշելիս պայման չէ, որ այն ուղղակիորեն մակաբերվի նրա զբաղեցրած տարածքի չափերից, քվանտակից և տնտեսական հնարավորություններից: Դրանք, անշուշտ, հզորության գործոններ են, սակայն պատմությանը հայտնի են ոչ քիչ օրինակներ, երբ բոլոր այդ տվյալներն ունեցող պետությունները կամ հզոր չեն դարձել, կամ էլ կործանվել են և հետացել պատմության բեմից, որովհետև նրանց պակասել են այլ տվյալներ: Դրանց մեջ առաջնային է ազգային համակուռ մտածելակերպի և հոգեբանության ձևավորումը: Այս դույքի կարևորությունը ակնառու կերպով դրսևորվեց հայության մոտ վերջին մեկուկես տարվա ընթացքում: Հայ ժողովրդի ազգային մրտածելակերպի և հոգեբանության մեջ կատարվեց արմատական, որակական փոփոխություն: Նա ուրիշին ապավինելու ազգից վերածվեց առաջին հերթին իր սեփական ուժերի վրա հույս դնող ազգի: Քաղաքական դեպքերի զարգացումը Անդրկովկասում և բովանդակ Խորհրդային Միության մեջ, տասնյակ տարիներ շարունակ հոչակված սկզբունքների սին և անկիրառելի լինելը, այդ սկզբունքների լոզունգային բնույթը, արյունալի բախումները էթնիկական հողի վրա՝ Սումգայիթ, Ֆերգանա, Թբիլիսի, Աբխազիա, Տովի Ուզեն, կենտրոնական մարմինների կողմից դրանց հաղաքական գնահատական տալուց հրաժարվելը և կատարված ու կատարվող ներույթների ու դեպքերի բացահայտ ու միտումնավոր խեղաթյուրումները, հայ ժողովրդին պատրանքաթափ արեցին: Նա ստիպված էր վերանայել նախկին հաղաքական արժեքները, այդ թվում և «ժողովուրդների անխախտ բարեկամություն» և «տարբեր ազգերի ու ժողովուրդների եղբայրական ընտանիք» կատեգորիաները: Հետևանքը եղավ այն, որ հայերն ազգովին ըմբռնեցին և ըմբռնելուց հետո գործնականորեն կանգնեցին այն տեսակետի վրա, որ առաջին հերթին իրենք են կոչված իրենց սեփական ուժերով պաշտպանելու իրենց պատիվը, ընտանիքը, գյուղը, հաղաքը, շրջանը, հանրապետությունը և նրա սահմանները, այսինքն՝ իրենց ազգային՝ գոյությունը: Ամեն մի ազգի գոյությանն իմաստը և առաքելությունն առաջին հերթին հենց դա է: Ուրիշ ազգեր ու ժողովուրդներ, հաղաքական ու գիտվորական ուժեր եզակի ժամանակներում պահին կարող են օգնության ձեռք մեկնել կամ չմեկնել, կարող են ուշանալ երբեմն ժամ կամ երբեմն օր, դա էական չէ, բայց որ ամեն մի ազգ առաջին հերթին հենց իրեն է ՊԱՐՏԱՎՈՐ իրեն պաշտպանել, դա անսիամ է: Ահա այս սկզբունքի ըմբռնումը և կիրառումը հայ ժողովրդի կողմից, որի ականատեսներն եմ մենք, իսկական ՈՐԱԿԱՆՔ թռիչք է հայերի ազգային մտածելակերպի, արժանապատվության, հոգեբանության և որպես արգասիք այդ բոլորի՝ հաղաքականության մեջ: Դրա շնորհիվ հայերը մատաղացու ազգից, ինչպես շատ հաճախ նա ներկայացվել է պատմության մեջ և երբեմն, իրոք, նա այդպիսին էլ եղել է, վերածվեցին հերոսություն կատարելու կոչված, խիզախաբար իր գոյությունը և պատմական իրավունքները պաշտպանող ազգի, որն այժմ ընդունակ է ամեն տեսակ զոհողության: Բայց դա արդեն ոչ թե մատաղացուի զոհաբերություն է, այլ հաշվարկով ֆիդայու, որի շնորհիվ ազգը ազգ է դառնում և հակառակորդն էլ հարկադրված հաշվի է նստում նրա հետ:

Ահա առանց այսպիսի գիտակցության ձևավորման անիմաստ է խոսել որևէ ազգի հզորության մասին, թեկուզ և նա զբաղեցնի ընդարձակ տերիտորիա և լինի բազմամարդ: Եվ մենք կարող ենք հպարտանալ, որ հայ ժողովրդի մեջ առկա է նման գիտակցությունը, որը նրա հզորության առաջին նախապայմանն է:

Հայաստանի հզորացման մյուս կարևոր աղբյուր դարձավ հայ ժողովրդի շարքերի աննախադեպ միավորումը. միասնականության հաստատումը սոցիալական տարբեր խմբերի և սերունդների միջև: Պատկերավոր ասած, եթե հայերը մինչև 1988—1989 թթ. ավելի շատ նման էին կողմ-կողմի կանգնած մարդկանց, ապա այժմ նրանք ՄԻԱԶՈՒՅԼ ազգ են: Սա չի նշանակում, թե նրա շարքերում չկան տարբեր նոսացումներ, կազմակերպություններ և այլազան մտածելակերպի տեր մարդիկ: Դրանք կան, ինչպես ամեն մի կենդանի օրգանիզմում: Բայց ներկա պահի համար բնորոշն այն է, որ հայ ժողովրդի բացարձակ մեծամասնության ազգային-հաղաքացիական դիրքորոշումը հայ ժողովրդի և Հայաստանի առջև կանգնած հանգուցային հարցերում նույնն է: Կարող են լինել և կան տարբեր մոտեցումներ այս կամ այն հարցի լուծման նկատմամբ, բայց որ, կրկնում ենք, հայ ժողովրդի բացարձակ մեծամասնության դիրքորոշումը նույնն է սեփական ուժերին ապավինելու, ազգային արժանապատվության պահպանման, Արցախի և այլ հարցերում, դա անվիճելի է: Եվ մենք պարտավոր ենք անընդհատ հիշել, որ պատմության ընթացքում մենք շատ ենք տուժել մեր անմիաբանությունից: Եվ եթե մենք չենք ուզում, որ դա կրկնվի, եթե մենք ուզում ենք ապացուցել, որ պատմության դառն փորձից դասեր ենք հաղել, եթե մենք չենք ուզում գործի դառնալ օտար ուժերի ձեռին, ապա մենք պետք է գերմարդկային չաներ գործադրենք այս միացյալ-միասնությունը պահպանելու որպես պատմական կարևոր նվաճում և Հայաստանի հզորության առնավատչյա:

Հայաստանի հզորացումը իրագործվեց նաև նրա էթնիկական հետագա կոնսոլիդացման ուղիով, որը որոշ իմաստով մեր կամքից անկախ տեղի ունեցավ: Խոսքը Ադրբեջանի տարածքում (Արցախի սահմաններից դուրս) բնակվող մոտ 215 հազար հայերի գաղթի մասին է Հայաստան և, որպես դրա պատասխան-արդյունք, մոտ 153 հազար ադրբեջանցիների հեռանալը մեր հանրապետությունից: Ըստ էության դա ընդունեց ԱԶԳԱՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹ, որի հետևանքը եղավ մեր հանրապետության ազգաբնակչության աճ՝ ի հաշիվ հայերի, և էթնիկական առումով նրա միատարրության հետագա բարձրացում:

Սակայն զաղթականության հարցի կապակցությամբ անհրաժեշտ է նկատի ունենալ մի հանգամանք ևս: Բոլորս հիշում ենք, որ երբ սկսվեց Արցախի ժողովրդի արդարացի պայքարը և երբ Հայաստանը բիկուզ կանգնեց նրան, ապա մեզ անհանգստացնում էին, թե դուք արդյոք մտածե՞լ եք այն հայերի մասին, որոնք դեռ բնակվում են Ադրբեջանում, որ նրանք պատանդներ են, որոնց հետ կարող են լինել նոր սումգայիթներ, որ հնարավոր չէ ամեն մի հայի կողմից մի տանկ կանգնեցնել և այլն: Իրոք, հնարավոր չէ ամեն մի հայի կողմից մի տանկ կամ մի զինվոր կանգնեցնել և դրա անհրաժեշտությունն էլ չկա, եթե վարվի հիշտ ու վճռական հաղաքականություն, եթե իրավասու մարմինները ժամանակին իրագործեին սահմանադրությամբ նրանց տրված լիազորությունները, որը չարվեց: Սակայն վերոբերյալ «փաստարկների» նպատակն էր ենթադրել Հայաստանի և բնդհանրապես բոլոր հայերի վրա, որպեսզի երանք հրաժարվեին պայքարելու պատմական անարդարության վերացման համար: Այժմ, երբ գործնականում Ադրբեջանում այլևս հայեր համարյա չեն մնացել, Հայաստանի վրա ենթում գործադրելու, նրան սպառնալու և նրա գործողությունները կաշկանդելու այդ լծակը իրենին վերացել է: Դա նշանակում է, որ մեր հանրապետության դիրքերն հիմա ավելի ամրապնդվել են, և նա ի վիճակի է ավելի ակտիվ ու վճռականորեն հանդես գալ:

Ես կարծում եմ, որ զաղթականության հարցին, որը, անկախ այն բանից, դա մեզ դուր է գալիս, թե ոչ, արդեն կատարված իրողություն է, մենք պետք է մոտենանք հենց այս տեսանկյունից: Այլ է գաղթականների տեղավորման և մեր հանրապետության պայմաններին նրանց հարմարվելու հարցը: Դա լուծվում է ու կլուծվի, և ինչքան Հայաստանը ուժեղ լինի, այնքան այդ պրոցեսն արագ կընթանա:

Հայաստանի հզորությունը մեծապես ամրապնդնցին հարաբերությունների այն նոր ձևը և մակարդակը, որ հաստատվել է Խորհրդային Հայաստանի՝ մայր հայրենիքի և նրանից աներևակայելի բաժանված զավակի՝ Լեռնային Ղարաբաղի միջև: Արցախյան շարժումը, որն իր բնույթով ազգայինազատագրական է և նպատակամղված է գաղութային իրավիճակի վերացմանը, բոլորովին նոր բնույթ հաղորդեց Հայաստանի և ԼՂԻՄ-ի հարաբերություններին: Մի կողմից ԼՂԻՄ-ը հստակորեն արտահայտվեց հօգուտ մայր Հայաստանին միանալու, իսկ մյուս կողմից Հայաստանը 1921 թ. հետո առաջին անգամ որպես սուվերեն պետություն, ի դեմս Գերագույն Խորհրդի, հստակորեն հանդես եկավ Լեռնային Ղարաբաղն իր կազմի մեջ մտցնելու դեկլարացիայով: Եվ թեև երկկողմ այդ ցանկությունը գործնականում դեռևս իր մարմնավորումը չի գտել, այդուհանդերձ, հարաբերությունները Հայաստանի և ԼՂԻՄ-ի միջև բարձրացվել են այնպիսի բարձր մակարդակի, որ ընդունել են այնպիսի գործնական և համապարփակ բնույթ, որ ընդհուպ մոտեցել են պետական ամբողջության ստատուսին: Արցախյան շարժումը լիովին հենվում է Հայաստանի ամենալայն ու բազմատեսակ աջակցության ու օգնության վրա և Արցախը իր հոգսերով ու պրոբլեմներով դարձել է Հայաստանի պետական, հաղաքական, ազգային, տնտեսական և հոգևոր-մշակութային կյանքի անբաժան մասը: Հայաստանն իր իրենությունը հաստատում է ոչ միայն իր սուվերենությունն իր տարածքի վրա հաստատելով, այլև իր բաժանված մի հատվածի օրինական շահերը պաշտպանելով: Արցախահայությունն էլ իր հերթին իր գոյությունը, ազգային, հոգևոր-մշակութային և տնտեսական կյանքը չի պատկերացնում Հայաստանից դուրս: Սա, անշուշտ, յուրահատուկ վիճակ է, հարաբերությունների իրենատիպ և աննախադեպ օրինակ: Եվ թեև հայտնի չէ, թե ինչքան երկար ժամանակ այդ իրավիճակը կպահպանվի, բայց որ Խորհրդային Հայաստանն այսօր ավելի լիարժեք կերպով է կատարում մայր հայրենիքի իր ֆունկցիաները, դա կասկածից վեր է: Արցախի հանդեպ նրա դերի բարձրացումը, որի հետ ստիպված են հաշվի նստել կառավարման կենտրոնական մարմինները, ինչպես նաև առանձին միութենական հանրապետությունները, աներկբայորեն վկայում է Հայաստանի կշռի աճի, նրա նոր առաքելության մասին: Սա, իհարկե, հիմք չի տալիս աչք փակելու ԼՂԻՄ-ի պրոբլեմի բարդության վրա, որը արհեստականորեն ավելի է խճողվում զանազան անհիմն «մտավախություններով» և մանավանդ աշխարհի տարբեր մասերում գոյություն ունեցող արյունալի ռեֆրենալ կոնֆլիկտների հետ զուգահեռներ անցկացնելով:

Վերջին շրջանում մղձավանջ է դարձել արցախյան կոնֆլիկտը լիբանանյանի հետ համեմատելու և դրանի նույնատիպ կոնֆլիկտներ ներկայացնելու միտումը: Սակայն դրա համար ոչ մի հիմք չկա: Նրանի տարբերվում են միմյանցից թե՛ իրենց բնույթով և թե՛ դրսևորման ձևերով:

Արցախ Խորհրդային Միության անբաժանելի մասն է, որն ունի ուժեղ իշխանություն, ընդունակ իր իրավասությունը տարածելու ամբողջ երկրով մեկ, այդ թվում և Արցախի վրա: Դրա համար պահանջվում է միայն մեկ բան. իշխանության կենտրոնական մարմինների ցանկությունը, վճռականությունը և հաղաքական կամքը:

Վերջին մեկուկես տարում Հայաստանի դիրքերն ամրապնդվեցին նաև միջազգային մասշտաբով: Ճիշտ է, դա կապված է երկրաշարժի ու նրա հետևանքների վերացման հետ, երբ բազմաթիվ պետություններ՝ ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, ԳՖՀ-ն, Ֆրանսիան, Իտալիան, Նորվեգիան, Ֆինլանդիան, Սիրիան, Իրանը, ԴԺՀ-ն, Հունգարիան և այլն, ինչպես նաև միջազգային կազմակերպությունները օգնության եկան մեր հանրապետությանը: Բայց դրա հետևանքը եղավ այն, որ այսօր Հայաստանն ունի բավականին ընդարձակ կապեր արտասահմանյան պետությունների հետ, նրանք տարբեր բնույթի չհնարարություն են իրականացնում, ֆինանսական-տեխնիկական ու տնտեսական օգնություն ցույց տալիս նրան և, որ պակաս կարևոր չէ, մեր հանրապետության հարցերը, նրանում տեղի ունեցող իրադարձությունները պահում են իրենց ուշադրության կենտրոնում: Այդ պատճառով Խորհրդային Հայաստանի վիճակը եզակի է և իր նախադեպը չունի:

Այդուհանդերձ կարող է հարց ծագել, թե ինչպե՞ս կարելի է խոսել Հայաստանի հզորության մասին, երբ տեղի է ունեցել երկրաշարժ, որն ավերել է շատ բնակավայրեր և տնտեսական մեծ վրնասներ հասցրել հանրապետությանը: Նման հարցադրումն առաջին հայացքից կարող է միանգամայն օրինական թվալ: Բայց միայն առաջին հայացքից:

Վերևում արդեն նշվեց, որ ուրևէ պետության հզորությունը հիշտ չի լինի ուղղակիորեն բխեցնել երրա տնտեսական վիճակից և կախման մեջ դնել դրանից: Բազմաթիվ պետություններ կան, որոնք երկրաշարժ ու ավերածություններ չեն տեսել և ունեն բնական հարուստ ռեսուրսներ, սակայն նրանց չի կարելի դասել հզորների շարքը: Տրնտեսական ցուցանիշներն իրենին վերցրած հիմք չեն կարող ծառայել խոսելու այս կամ այն պետության ուժեղ ու զարգացած լինելու մասին, նրանք չեն կարող ուժեղության միակ չափանիշը լինել: Հայտնի է, որ Խորհրդային Միությունը մի շարք ցուցանիշներով աշխարհում գրավում է առաջին տեղը: Աշխարհում ոչ մի պետություն այնքան պողպատ չի ձուլում, նավթ և այլ հանքանյութեր չի արդյունահանում, որքան ԽՍՀՄ-ը: Մենք առաջին տեղն ենք գրավում նաև արդյունաբերական և գյուղատնտեսական մի շարք ապրանքների արտադրությամբ: Չնայած դրան, այժմ մեր երկիրը խոր տրնտեսական ճգնաժամ է ապրում և կառավարությունը չի կարողանում կատարել յուրաքանչյուր իշխանության առաջին և ամենակարևոր պարտականությունը՝ կերակրել և հագցնել սեփական ժողովրդին: Եվ պատահական չէ, որ շատ տնտեսագետներ, այդ թվում և խորհրդային, լրջորեն ենթադրում են այն հարցը, թե ԽՍՀՄ-ը դասե՞լ զարգացած երկրների շարքը, թե՞ տիպաբանական առումով նա ավելի մոտենում է ասիական և աֆրիկյան զարգացող երկրներին:

Եվ եթե այս տեսակետից մոտենանք երկրաշարժի հետևանքով Հայաստանում ստեղծված իրավիճակին, պետք է ընդգծել մի սկզբունքային առանձնահատկություն: Երկրաշարժի առաջ բերած ավերածությունները և տնտեսական վնասները կարելի է հաղթահարել ժամանակի ընթացքում՝ համապատասխան կապիտալ ներդրումներով, աշխատանքի խելացի կազմակերպման շնորհիվ և խորհրդային կենտրոնական կառավարության, խորհրդային տարբեր հանրապետությունների, ինչպես նաև արտասահմանյան տարբեր երկրների օգնությամբ: Եվ Հայաստանը անպայման դրան կհասնի: Միևնույն այն պրոցեսները, որոնց մասին խոսվեց վերևում և որոնք Հայաստանը դարձրին ավելի հզոր, հնարավոր չէ իրականացնել կապիտալ ներդրումներով և դրսի օգնությամբ: Այդ խմորումները պետք է տեղի ունենային հայ ժողովրդի ներսում, նա պետք է ազգովին փոխվեր, պետք է փոխվեին նրա մտածելակերպը և հոգեբանությունը: Դեռ ավելին. եթե անգամ երկրաշարժը տեղի չունենար և մեր բոլոր հաղաքներն ու գյուղերը կանգուն մնային, իսկ մեր կողմից մատնանշված վերափոխումները հայ ժողովրդի մեջ չկատարվեին, միևնույն է, մենք չէինք կարողանա խոսել Հայաստանի հզորության, նրա դերի ու կշռի բարձրացման մասին: Այս բանը հասկանալի կդառնա, եթե մենք, կրկնում ենք, կանգնենք այն տեսակետի վրա, որ չի կարելի ամեն ինչ հանգեցնել տնտեսական գործոնին, տնտեսական ցուցանիշը չի կարող լինել հզորության ու բարգավաճման միակ չափանիշը: Մյուս կողմից այժմ լրիվ հնարավորություն կա և պետք է ավարտած շրջանների տրնտեսությունը վերականգնել գիտության և տեխնիկայի վերջին նվաճումների օգտագործմամբ, որը կարող է վճռական դեր խաղալ Հայաստանի գիտատեխնիկական վերազինման գործում նրա նաև տրնտեսական հզորացման գործում:

Հայ ժողովրդի մեջ տեղի ունեցած արմատական փոփոխությունները՝ առաջին հերթին սեփական ուժերին ապավինել, ազգային արժանապատվության և իրենասիրության զգացումի ամրապնդում, ոչ թե զոհվելու, այլ հերոսանալու վճռականություն, հարաբերությունների նոր ձևեր և մակարդակ Արցախի հետ, ավելի լայն չափով Հայաստանի միջազգային ասպարեզ դուրս գալը և այլն, այս բոլորը հանդիսանում են հուսալի ոստնակ հետագա թռիչքի և Հայաստանի հզորացման համար և մեզանից յուրաքանչյուրի սրբազան պարտքն է լինել դրա անկաշառ ևվիրյալը և անվեհեր ծառան:

Նիկոլայ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՀԽՍՀ արևելագիտության ինստիտուտի փոխտնօրեն, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր